

Документы
Министерства земельных
и имущественных отношений

612.84
0-56

1934г

Ա. Ր. Տ. Ա. Գ.

ԱԼԲՈՒՅՈ ԿՅԱՆՔԻ ՀԱՅՈՒ



Պրոֆ. Ա. Գ., 020.904.010

ՊԱՀՊԱՆԻ Ր ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆԻ

612.84
0-56

1934

Ա. Զ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.
ՎԵՐԿՐԱՑԻ ՀՐԱՄԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ

Հ Յ Ո Վ Ա Յ Ո Վ Ա Յ Ո Վ Ա Յ Ո Վ Ա Յ Ո Վ

284
ԳՐԱԴԱՐԱՆ Ա. Վ. ՊԵՏՐՈՎԻԿՍԻ
456 Կ.

ՊԱՇՊԱՆԻ Բ ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆԴ

Թարգմ. Հ. Բողդանյան

5

ԱԶՈՎ-ՍԵՎՈՐՎԱՅՐ
ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՄԱՆԿՑՈՒԹՅՈՒՆ
ՊՈՍՏՈՎ-ԴՈՆ-1934

1916

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I.	Աչքերի նշանակությունն աշխատավորների կյանքում	3
II.	Տեսողության որդանի կազմությունը	6
III.	Տեսողության խանգարումը ներքին հիմանդրությունների պատճառով	15
IV.	Աչքերի հիմնվանդությունների արտաքին պատճառները	21
V.	Տրախոման աչքի ամենաստրաֆելի հիմանդրությունն և պայքարը նրա դեմ	23
VI.	Աչքի վաստամերը գյուղատնտեսության մեջ	32
VII.	Ինչպես պայքարել աչքի վաստամերի դեմ գյուղատնտեսական աշխատանքում	
VIII.	Կրից և այլ նյութերից առաջացած աչքերի վատամեթերը	50
IX.	Յերեխանների աչքի հիմանդությունը և վաստամեթերը, յերեխանների աչքի առողջության պահպանումը	9
X.	Հասակավոր մարդկանց աչքերի հիմանդությունը կորությունը և պայքարը նրա դեմ	



3376

41

Отв. ред Г. А. Потенц

Сдан набор 21 IV-1934 г.

Издан. 216/3824

Статформат А6 105x148

Уполномочил № Б—399

Тех. ред. О. Тер-Давыдов

Подписано в печ. 7.V.1934 г.

Об'ем 21 в печ. листа.

Заказ 216.

Тираж 100 экз.

Типография им. "Станки 1902 года" АЧПТ в г. Ростове на Дону

ԱՉՔԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Ցուրաքանչյուր աշխատավորի կյանքում աչքը շատ կարևոր նշանակություն ունի: Յավական ե ասել, վոր յերկու աչքով կույրը կատարյալ հաշմանդամ (ինվալիդ) ե համար վում:

Ճիշտ ե, մեր Խորհրդային Միության մեջ կույրերն այլիս այն անողնականները չեն, ինչ վոր նրանք չոկտեմբերյան հեղափոխությունուն առաջ ելին: Նրանց ներկայումս աշխատեցնում են իրենց ուժերին համապատասխան արտադրությունների մեջ, ու ուրանը արդեն գառնում են հասարակության գործունյա և ոգտակար անդամներ, թեև, այն, կարուտ են տեսունակների մշտական հոգածությանը:

Բայց չխոսենք կուրության մասին։ Բավական ե վոր միայն թուլանա տեսությունդ, և դու արդեն պակաս ընդունակ ես աշխատանքի։ Աչքերի թուլ տեսողության տեր աշխատավորը, թեև կույր չե, բայց բոլորովին չի կարող արտադրել այն նորման, վոր կանոնավոր տեսնողն ե արտադրում։ Պետք ե խմանալ, վոր աչքի ամեն տեսակ սռւր հիվանդություն, յեթե նույնիսկ վա անվտանգու ժամանակավոր բնույթ ունենա, ինչպես, որինակը աչքը աղբակալելու ժամանակ, կարող ե առաջ բերել աշխատելու ժամանակ, կակավոր անկարողություն։

Մեր ԽՍՀՄ-ում տակամին գեռ շատ կան աչքի հավանդություն ունեցողներ։ Միայն յերկու աչքով կույրերի թիվը համառում ե մոտ 300 հազարի։ Միլիոնից շատ ավել են այն հիվանդների թիվը, վորոնք բռնված են աչքի այնպիսի վտանգավոր հիվանդությամբ, ինչպիսին տրախոման ե։

Մորհոգային իշխանությունը և հասարակայնությունը հաջողությամբ պայքարում են հին ոեժիմի այդ խայտառակ ժառանգության դեմ, անտեսական հետամնացության, հին կենցաղի ու տպիտության այդ հետեւանքների դեմ։ Կուրության տոկոսն իջել

է, արախոման լիկվիդացիալի յե յենթարկվում, իսկ ծաղկից կուրացողներն արդեն հազվագեց են։

Սոցիալիզմի կառուցումն ընթանում է մեղանում արագ տեմպերով։ Աժենուր յեռ է գալիս հրատապ, յարված աշխատանքը, վոր կարիք ունի ուշիմության, ինչպես և հատուկ ու առողջ աչքերի։ Խնդիրը միայն արտադրանքի քանակի մասին չե, այլ և նրա վորակի մասին ե։ Գյուղատնտեսության մեջ ևս արդեն անցել է հին, անկուլտուրական աշխատանքի ժամանակ, յերբ կիսակույր աչքերով ել կարելի յեր մի կերպ վարել, ցանել, հավաքել բերքն ու ղեկավարել ալնտեսությունը։

Կոլեկտիվ տնտեսությունը պետք ե տարածընը ակտիվ մթերքներ, վորոնք արդյունահանվում են զանազան տեսակի մեքենաների ոգնությամբ։

Խնդիր ե առաջադրված՝ լիովին լիկվիդացիայի յենթարկել կիսադրագիտությունը, ապահովել աշխատավորներին, վոր տիրապետեն տեխնակային։ Այս բոլորն անելու համար պետք ե ունենալ տեսողություն, բայց վոչ հասարակ, այլ հստակ, սուր տեսություն։

Պարզ ե ուրեմն, վոր յուրաքանչյուր աշխատավոր պետք ե զիտենա, թե ինչ վրտանկներ կարող են սպառնալ նրա աչքերին՝ իր աշխատանքային կյանքի ընթացքում, ինչպես պետք ե զերծ պահի իրեն այդ վտանգներից ու ինչպես պետք ե պահպանի իր աշքերը։ Այս գրքուրիփ նպատակն ե տար նրան սույն գիտելիքները։

II.

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Նախ և առաջ մի քանի խոսք այն մասին, թե ինչպես ե կազմված մեր տեսողական ապարատը, վորն անհրաժեշտ ե ամեն կերպ խնամել՝ հստակ և սուր տեսողությունը պահպանելու համար։


Այս ապարատը, կամ, ինչպես մենք ասում ենք, տեսողության որգանը միայն աչքերից չի կազմված։ Նրա կազմությունը կարելի յենամեմատել յերկու բաղաքների միջև հաստատված յերկաթալարերի հետ։ Որինակ, վորպեսզի Մոսկվան կարողանա Ռոստովից հեռագիր ընդունել, անհրաժեշտ ե, վոր Ռոստովի ունենա հեռագիր տվող, իսկ Մոսկվան

հեռագիր ընդունող գործիք, Բացի դրանից, հարկավոր ե, վոր այս յերկու քաղաքների միջև հաստատված լինի յերկաթալարերի անընդհատ կապ՝ ելեկտրական հոսանքը Ռոստովից Մոսկվա հաղորդելու համար։

Նույնը կատարվում ե նաև մեր տեսողության որգանում. մեր աչքերը լոկ լույսը գունիչներ են. Լույսի ազդեցության տակ նրանց միջ նյարդային հոսանք ե գոյանում, վորը տեսողության նյարդերի ուղիներով բողջ ուղեղին, անցնում ե գլխի ամհասնում և ուղեղին, անցնում ե գլխի ամ-

բողջ ուղեղի միջով մինչև ամենահետին, ծոծրակային մասը, ուր և գտնվում ե տեսողության կենտրոնական ուղեղը։ Այս բոլորը ցույց ե տրված բացատրական նկարում (նկար 1)։

Այսպես ուրեմն, յերբ մենք նայում ենք մի առարկայի և տեսնում ենք նրան, պետք ե իմանանք, վոր այդ գեպքում գործում են վոչ միայն աչքի խնձորներն, այլ և մեր ուղեղը։ Հասկանալի յե, վոր տեսողության խանդարություններն ել, մինչև իսկ աչքերի կատարյալ կուրությունը, կարող են առաջնալ մեր տեսողական ապարատի ուղեղությանը հիվանդություններից, չնայած վոր աչքի խնձորները միանդամայն առողջ են։



Նկար 1. Գլխի կտրվածքը ցույց է տալիս տեսպական և պարանի իր ամրողությամբ.

1) Տեսղական նյարդեր, 2) աչքի ինձորը, 3) տեսղական նյարդերի շարունակություն (տեսղական ուղեները), 4) տեսղական նյարդերի շարունակությունն ուղեղում, 5) ուղեղի ծոծրակային մասնիկը և նրանում տեսղական կինտրոնը, 6) ուղեղի թաղանթները և նրանց միջև հեղուկը, 7) ուղեղի զորացույցն կեղեր, 8) մեծ ուղեղի կիսողունքը (ձախ կողմինը), 9) գանգի գոսկբային արկղը

Մարդիկ մասամբ կորցնում են իրենց տեսողությունը, կուրածնում են ժամանակավորապես կամ ընդմիշտ գլխի ուղեղի (որինակ՝ ուղեղի սիֆիլիսի) ու նրա թաղանթների զանազան հիվանդություններից, նմանապես և ներքին ընդհանուր հիվանդություններից, վորոնք այս կամ այն կերպով մասում են տեսողական նյարդերին կամ կենտրոններին:

Բավական ե ուղեղի չնչին, ժամանակավոր սակավարյունությունը, վորպեսզի աչքերի տեսողությունը մթագնի: Ուշաթափված մարդիկ պատմում են, վոր ուշը գընալուց առաջ նրանց «աչքերը մթնում են»: Յերբ ուշաթափ ընկած, ինչպես և քնած մարդու կոպերը բաց են անում և լույս արձակում նրա աչքերի մեջ, նա վոշինչ չի տեսնում, մինչև վոր չղարթնի, կամ մինչև ուշը չգտ:

Հետեաբաը սրանով պարզ ե, վոր մեր աչքերի սովորական աշխատանքը միաժամանակ նաև գիտակցական աշխատանք ե: Պետք ե լինել ուշաղիր, կենտրոնանալ աշխատանքի մեջ, կողմնակի վոչ մի բանով չտարփել վորպեսզի լավ գիտել աշխատանքի ամբողջ ընթացքը և նրա բոլոր կարեւոր մանրամասները:

նությունները։ Յերբեմն բանվորներն ու կոլտնտեսականները վնասում են իրենց աշքերը և մարմնի այլ մասերը հենց նրա համար, վոր ունենալով առողջ աշքեր, բավականաչափ չեն լարում տեսողական որդանի ուղեղային մասը, բավականաչափ չեն խորանում իրենց տեսած առարկաների մեջ։

Յեկեք հիմա հատուկ ուշադրություն նվիրենք աչքի խնձորին և նրա կոպերին, վորոնք պաշտպանող դեր են կատարում։

Աչքի խնձորը նմանեցնում են լուսանկարչական ապարատի։ Այս ապարատի նման, աչքի խրձորը յերկու մասի յե բաժանվում։ 1) յետևի մասը, ուր գտնվում է լույսի համար զգայուն (լուսազգաց) ցանցաթաղանթը՝ հենց սրա վրա յե, վոր ճառագայթների միջոցով պատկերանում, նկարվում են մեր տեսած բոլոր առարկաները, և 2) առջևի մասը, վոր կազմված է թափանցիկ նյութերից, վորոնց միջից լույսն անցնում է աչքի խորը և վորոնք հավաքում են լույսի ճառագայթ։ Ները խոշորացույցի նման։

Մեր տեսողությունը նույն լուսանկարչական պատկերահանումն է։ Մենք շրջում ենք մեր գլուխին ու աչքերը դեպի այն առարկան, վորն ուզում ենք պատկերահանել, այ-


սինքն՝ դիտել, Յեթե բաց ենք անում աշքերու յետ ենք մղում կոպերը, գրանով աղաւա մուտք ենք բաց անում լույսին՝ աչքի խորքն անցնելու համար։

Լույսն առարկայից անցնում է նախ՝ աչքի խնձորի առջևի մասի թափանցիկ լուսամտի, կամ, ինչպես ասում են, յեղերաթաղանթի միջով, ապա թափանցում է բրի մեջ, վոր մի կլոր անցք է գունավոր ծիածանաթաղանթի վրա, հետո վիստնյակի թափանցիկ նյութերի ու ապակենման մարմնի միջով հասնում է ցանցաթաղանթին, ուր և պատկերանում է առարկան։ Խոկ ցանցաթաղանթն իր լույսի գրգիռը հաղորդում է տեսողական նյարդերի միջոցով։

Ուշադրությամբ դիտեցեք աչքի այս պարզ նկարը և դուք կհասկանաք այն բոլորն, ինչ վոր վերենում ասացինք (նկար 2)։

Աչքի այս բոլոր մասերն արտաքուստ չեն յերենում։ Յեթե մենք նայում ենք մարդու աչքերի մեջ, լավ ենք տեսնում միայն առաջի մասը, վոր կոպերով չի ծածկված։ Տեսնում ենք նաև արտեսանունքներով յեղերված կոպերի մաշկային մակերեսույթը և հսնքերը (Դիտեցեք 3. ըդ նկարը և համեմատեցեք նրան 2. ըդ նկարի հետ)։

Մենք չենք տեսնում աչքի ներսի մասը, նրա յետի բաժինը. չենք տեսնում մկանները, վորոնք այս ու այն կողմ են շարժում աչքը, չենք տեսնում բազմաթիվ ա-




Նկար 2. Աչքի խնձորի յև կռպիրի կտրվածքը.

- 1) վերեկի կոպը,
 - 2) ծիածանաթաղանթը,
 - 3) վուզնալիքը,
 - 4) աչքի արտաքին սպիտակուցային թաղանթը,
 - 5) աչքի թաղանթը,
 - 6) աչքի նյարդային թաղանթը (ցանցագը),
 - 7) ապակենման մարմինը,
 - 8) տեսդական նյարդը,
 - 9) գնում և զեպի ուղեղը,
 - 10) ներքինի կոպի լրդամթաղանթը (կոնյունկուլալա),
 - 11) ներքինի կոպը,
 - 12) արտեհանունքները (թարթիչները),
 - 13) վերեկի բայցանաթաղանթը (կոնյունկուլիս).
- Ա—լույսի ճառագայթականիքը:

նոթները, վորոնք առատորեն արյուն են հայթայթում աչքին:

Մեզ թվում ե, վոր աչքի խնձորը բոլովին անջատ ե աչքի բուն մարմնից, գուրկ ե արյունից ու կենդանությունից, վորպես մի ապակի:



Նկար 3. Աչքի արտաքին տեսքը.

- 1) չորսը,
- 2) վերին կոպը,
- 3) սպիտակուցային թաղանթը,
- 4) սոտրին կոպը գորը ծածկված է լորձաթաղանթով,
- 5) ծիածանաթաղանթը բբի հետ, վորի առջևը գտնվում է ծիածանաթաղանթը,
- 6) թափանձիկ, ուստի և անտեսանելի յեղջուրաթաղանթը,
- 7) ապակի տակ կտրվածքը գործում է կաշի տակ՝ խորքում:

Մինչդեռ իրականում, յերբ մարդ նայում է, աչքերում մի ամենալարված աշխատանք է կատարվում: Կոպի մկանները

քաց են անում աչքը՝ լույսը ներս թողնելու
համար և ապա հաճախակի թարթումներով
փակում են նրան՝ յեղջերաթաղանթը թա-
ցացնելու, նրան չորանալուց ապահովելու,
ինչպես նաև աչքի մեջ ընկած չոփերը, փո-
շին դուրս հանելու և տաքացնելու համար:

Այս աշխատանքը կատարելու համար կո-
պերին ոգնում ե արցունքի զեղձը, վորն,
արցունքի հեղուկ արտադրելով, առատապես
փոռոգում ե աչքը ցուրտ և քամի յեղանակ-
ներին:

Աչքի մկանները լարված կերպով ուղ-
ղում են նրան զեպի զիտվող առարկան.
Աչքի ներսում գողդոջում ե բիբը, վոր զե-
կավարում ե լույսի հոսանքը՝ յեթե լույսը
շատ պայծառ ե, բիբը սեղմակում ե, իսկ յերբ
լույսը նվազ ե կամ մութ տեղում, նա
լայնանում ե: Թթվուում ե վոսպնյակը, տար-
բեր յեղանակներով հավաքելով լույսի ձառա-
գայթները, վորպեսզի ցանցաթաղանթի վրա
պարզ նկար ստացվի: Արյունատար անոթ-
ների միջով առատորեն հոսում ե թարմ ար-
յունը, վորով մնվում ե աչքը և նորոգվում
ե աչքի նյարդային թաղանթի լուսագույց
նյութը: Աչքը, վոր արտաքուստ թվում ե
այնքան անշարժ, յեռուն կյանք և ապրում

և աշխատում ե իր բոլոր մասերով, յերբ
մենք բաց աչքերով ենք դիտում արտաքին
աշխարհը:

Մյուպես ուրեմն, հասկանալի յե, վոր տե-
սողության որգանի վոչ միայն ուղեղային
մասն, այլ և աչք սերտ կապ ունի մարդու
ամբողջ մարմնի հետ ու նույն կյանքն ե
ապրում, ինչ վոր և բովանդակ որդանիզմք:

III.

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄԸ ՆԵՐՖԻՆ ՃՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ

Այժմ պատմեմ ձեզ այն վտանգների մա-
սին, վորոնք սպառնում են աչքերին, նմա-
նապես և այն մասին, թե ինչպես կարելի
յե նրանցից պաշտպանվել:

Այս վտանգներն սպառնում են աչքերին
չորս կողմից: Վտանգ գրսից, մարդուն շրջա-
պատող բնության կողմից. վտանգ ներսից,
վորեւ ընդհանուր հիվանդությամբ բռնված
մարմնի կողմից: Առաջ խոսենք վերջին տե-
սակի վտանգների մասին:

Մենք լիակատար իրավունք ունենք ա-
սելու. ոյեթե առողջ ե մարմինդ, առողջ են
նաև աչքերդ: Դա նշանակում ե, վոր ամ-

բաղջ մարմին հետ նույն կյանքն ապրող աշչքերը, վորոնք մնվում են նույն արյունով, վորով և մեր մարմին մյուս անդամներն են մնվում, կարող են լինել բոլորովին առողջ և աշխատունակ, յեթե առողջ և ամբողջ որգանիզմը:

Հետևաբար յուրաքանչյուր աշխատավորի կարեվորագույն պարտականությունն եւ ուշադիր վերաբերմանք ունենալ դեպի իր առողջությունը: Կոլտնտեսականը պետք է հոգտանի պատվատելու թե իր և թե ընտանիքի անդամների ծաղիկը, վորովինետե արև վերջինը հաճախ վոչչացնում եւ տեսողությունը, ավերելով յեղջերաթաղանթը և աչքի հատ գոյացնելով աչքերի վրա: Նա պետք է հետեւի իր մարմին, սպիտակեղենի և հագուստի մաքրությանը, չպետք եւ թույլ տա, վոր զարգանան վոյնիները, փայտովինները, լույերը, վորոնք առաջացնում են բծավոր և անդրադարձ (ՅՈՅՅՐԱԹԻԿԱՅ) տիֆ: Իսկ այս հիվանդությունները փոանդավոր բարդություններ են առաջացնում աչքերում:

Վեներական հիվանդությունները՝ սուսանակը (արիպակերը) և սիֆիլիսը սպառնում են վոչ միայն հիվանդի, այլ և նրա յերեխաների աչքերին: Իր ամուսնուց սուսանակով

վարակված կինը կարող եւ ծննդաբերության ժամանակ վորակը փոխադրել նորածին մասկանը. շատ յերեխաներ են կուրացել այս յեղանակով: Սիֆիլիսը կարող է կուրություն առաջացնել վարակվելուց նույն իսկ շատ տարի հետո, ավերիչ ներգործություն ունենալով տեսողական նյարդերի վրա: Սիֆիլիսն ուժեղ կերպով անշրջադառնում եւ սերնդի վրա, ժառանգական սիֆիլիս ունեցող յերեխաների մեջ յեղջերաթաղանթի խորը բորբոքում առաջացնելով: Դրա համար ամեն աշխատավոր պարտական և պայքարել վեներական հիվանդությունների դեմ ու պատշաճ մաքրության հետեւ:

Մալարիայի ժամանակ բշտիկավոր ցանով եւ ծածկվում վոչ միայն հիվանդի շըրթունքները, բերանի և քթի չորս կողմեր, այլ հաճախ նաև կոպերը և նույնիսկ աչքի խընձորը: Այս դեպքում նա մնայուն բծեր եւ թողնում յեղջերաթաղանթի վրա, վորոնք չափազանց փչացնում են տեսողությունը: Նման բծերը, և նույնիսկ աչքի հատերը, վորոնք կուրություն են առաջացնում, ավելի հաճախ գոյանում են յերեխաների ծաղիկ ու գեղձախտ հիվանդություններից: Ուռած դեմք, յերեսի մաշկի և գլխի մազոտ

ժամանի վրա ցան (Ըեռո), ականջի, քթի արտաթորում, պինդ սեղմված և լորձնակալած աչքեր, վորոնք խուսափում են լույսից — ահա գեղձախտավոր յերեխանսերի արտաքին տեսքը։ Իսկ յերբ մի քանի ամսից կամ մի քանի տարուց հետո, քանիցս կրկնելով, գեղձախտն անցնի, — աչքերը ցմահ փչացած են լինում յեղջերաթաղանթի պղտորումից։

Իսկ ինչ ե գեղձախտը։ Հայանի յե, վոր շատ հիվանդություններ, մանավանդ վարակիչ հիվանդություններն առաջանում են մարմնի մեջ թափանցող այն շատ մանր, կենդանի եյակներից, վորոնք միկրոբներ (բակտերիաներ) են կոչվում։ Սովորական աչքերով չի կարելի տեսնել, բայց նրանք շատ լավ նկատելի յեն խոշորացույցի միջոցով (միկրոսկոպ)։ Այդ եյակները մարմնի մեջ թափանցում են տարբեր ուղիներով և յեղանակով։ Խոլերի և վորովս յնատիֆի ժամանակ — ուտելիքի և խմելիքի հետ։ բծավոր տիֆի, անդրադարձ տիֆի, մտլարիալի, սիբիրախտի ժամանակ — միջատների խայթոցի միջոցով։ տուբերկուլյոզի (թոքախտի), թոքերի ժամանակի, գրիպի և այլ հիվանդությունների ժամանակ — անմարուր, բակտերիաներով վարակված ողը ներշնչելիս

Գեղձախտը զարգանում ե նաև այն ժամանակ, յերեխայի մարմնի մեջ թափանցում են տուբերկուլյոզի բակտերիաները, վորոնք յերկարատև ապրում են փոշու և աղբի մեջ ու կեղտոտ, կիսախափար, վատ քամահարվող կացարաններում գտնվող և աղբի մեջ կորած առարկանների վրա։

Մեր կոլտանտեսությունները, քաղբաժինների զեկավարությամբ, լայնորեն ծավալել են հաջող պայքար նոր կենցաղի համար, կյանքի կուլտուրական պայմանների համար, սանհիտարական և ընդհանուր լուսավորության համար։

Բայց մինչև այժմ ել զեռ կան կոլտանտեսուհի մայրեր, վորոնք իրենց գեղձախտավոր յերեխանաերին սեծացնում են խավար անկյուններում, խրճիթի խեղդուկ և կեղտօտ ողում։ Փաթաթում են նրանց, վախենում են լողացնել ու կերակրում են անկանոն։ Իսկ այսպիսի յերեխանսերին մշտապես պետք ե կացարանից դուրս տանել թարմ ողի մեջ և արելի տակ պահել։ Նրանց պետք ե շուտ-շուտ լողացնել, շուտ-շուտ սպիտակեղենը փոխել։ Նրանց սենյակը պետք ե լինի չոր, լույս և մաքուր։ պետք ե վորքան կարելի յե շատ բանջարեղեն ու մրգե-

դեն ուտեցնել նրանց: Այսպիսի յերեխա-
ներին շատ ոգտավետ ե ձկան յուղը:

Սչբի ցավ առաջացնողները միայն վերը
հիշատակված հիվանդությունները չեն: Տե-
սողության որգանն ավերող ուրիշ հիվան-
դություններ ել լինում են հաճախ:

Ամեն հիվանդությունների մասին չենք
խոսել: Կարևոր ե միայն հիշեցնել, վոր ամեն
տեսակ հիվանդությունների ժամանակ պետք
ե բժշկի դիմել՝ պահպանելու համար և
տեսողությունը, և առողջությունը և կյանքը:
Խորհրդային բժշկականությունն իր ոգնու-
թյամբ ապահովում ե բոլոր աշխատավոր-
ներին — թե Փարբիկոյին - գործարանական
ձեռնուրկություններում և թե գյուղատն-
տեսության մեջ:

Մեքենա-տրակտորային կայաններին կից
կազմակերպված են բուժական հաստատու-
թյուններ՝ մասնագետ լավ բժիշկներով:
Բժշկական կետեր կան բոլոր մեծ գյուղե-
րում: Հետևաբար կոլտնտեսականը չպետք
ե անուշադիր թողնի իր հիվանդությունը և
յերբեք չդիմի «հաքիմներին», այսինքն՝ գրո-
բացներին և ֆալքիներին: Գիտական բժշկու-
թյունը կտա նրան և հարկավոր խորհուրդը
և ողնությունը:

ԱՉՔԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԺԻՆ ՊԱՏՇԱՐՆԵՐԸ

Վորքան ել հաճախակի և վտանգավոր
լինեն աչքերի այն հիվանդությունները, վո-
րոնք առաջանում են մարմնի ներքին հի-
վանդություններից, բայց ավելի հաճախակի
և տեսողության որգանի համար ավելի
վտանգավոր են այն հիվանդությունները,
վորոնք գոյանում են զանազան վնասակար
նյութերի աչքի վրա ունեցած ուղղակի ներ-
գործությունից:

Մենք զիտենք, վոր աշխատանքի ժամա-
նակ աչքերը շատ անգամ ստիպված են յեն-
թարկվելու զանազան վնասակար ներգոր-
ծությունների: Թե ինչ կերպարանք կստանան
այդ վնասակարությունները, կախում ունի
այն պայմաններից, վորոնց մեջ ապրում և
բանում ե աշխատավորը, կախում ունի այն
առարկաներից, վորոնց հետ նա գործ ունի:
Ինքնին հասկանալի յե, վոր բանվորների
աչքերի վնասակածությունը ֆարբիկներում,
գործարաններում և շախտերում այլ բնույթ
կում, քան վարի, ցանքսի, կալի և ան-

սուններին խնամելու ժամանակ կոլտնտեսականների աչքերի վասնվածությունը:

Բայց նախ և առաջ պետք է նկատի ունենալ, վոր աշխատավորը հաճախ գնում է աշխատելու արդեն հիփանդ աչքերով։ Այսպիսի աչքերը մեկ կողմից դժվարացնում են աշխատելը, մյուս կողմից ել հեշտությամբ են յենթարկվում արտաքին վաստակարությունների ներգործությանը. նման աչքերի համար նույնիսկ թեթեվ վասնվածությունները կարող են վտանգավոր լինել: Վորպեսզի այդ բանը չլինի, անհրաժեշտ է ժամանակին բժշկել աչքեր։ Լավ կոլտնտեսությունները, գյուղատնտեսական կամքանիամից առաջնախորոք կարգի յեն բերում իրենց ամբողջ ինվենտարը։ Վոչ պակաս կարեոր են ախտորոք կարգի բերել աշխատավորի առողջությունը, մանավանդ նրա աչքերը։

Յես չեմ խոսի այստեղ աչքերի և մանավանդ կոպերի զանանազան թեթև բորբոքումների մասին, վորոնք առաջանում են կեղտոտ բնակարաններից, ծխից և փոշոց, ինչպես և աչքերը կեղտոտ մատներով ու լաթերով սօբելուց։ Յես անմիջապես կանցնեմ տրախոմային, վոր ամենալուրջ և ամենավտանգավոր աչքի հիփանդությունն ե։ Այս

հիփանդության դեմ պայքարը Փողկոմիսորհի կողմից հայտարարված ե վորպես հարվածային աշխատանք և արախոմայի վերացումը յին աշխատանք և արախոմայի վերացումը նշանակված ե յերկրորդ հնգամյակի առաջին իսկ տարիներում։ Տրախոմայի վրա հարկավոր ե հատուկ ուշագրություն դարձնել, վորովհետև նաև լայն ծավալ և ստացել զյուղական բնակչության մեջ և սուկալի վասն և հասցնում աչքերին։

V.

ԵՐԱԽՈՄԱՆ ԱՉՔԻ ԱՄԵՆԱՍԱՐՍԱՓԵԼԻ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆ Ե, ՊԱՅՔԱՐ ՆՐԱ ԴԵՄ
ՏՐՈԽՈՄԱՆ ԿՈՊԵՐԻ ՆԵՐՍԻ ԽԵԲՆԵՐ Ժած-
կող տամուկ լորձաթաղանթի հիփանդու-
թյունն ե։

Տրախոման վարակիչ հիփանդություն ե։
Ընտանեկան կենցաղում նրանով ավելի հաճախ վարակվում են մանուկները և ավելի պակաս հասակավորները՝ տրախոմայով հիփանդների հետ մոտիկ հպում ունենալուց։

Վարակը գտնվում է հիփանդ աչքերից արտաթորվող թարախի մեջ։ Այս արտաթօրատարախի մազաս, թարախի, վորն իր մեջ պարանքը (մազաս, թարախ), վորն իր մեջ պարունակում է հիփանդության միկրոբներ,

ընկնում եյերեսսրբիչի, լվացվելու ջրի և
ընդհանրապես այն առարկաների վրա, վո-
րոնք հպում են ունեցել հիվանդ աշքերի
հետ: Հետեաբար առողջ մարդը, վորը լվաց-
վում ե այդպիսի կեղտոտված ջրով, սրբում
ե աչքերը այգափիսի յերեսսրբիչով կամ լա-
թով և այլն, հեշտությամբ կարող ե վարա-
կել իր աչքերը:

Վատ ե նույնպես, յերբ հիվանդը մատ-
ներով սրբում ե իր ճպոտ և թարախակա-
լած աչքերը, և հետո, ձեռքերը չլվացած,
նույն մատներով բռնում ե տան մեջ զբա-
նված առարկաները, գոների բռնատեղերը,
ամանեղենները և այդ բոլորի վրա թողնում
ե վարակը: Իսկ այս վերջինը, վորն աչքե-
րով չի տեսնվում, կարող ե ընկնել առողջ
մարդու ձեռքերի վրա, յերբ նա դիպչում ե
այդ կեղտոտված առարկաներին և այս ճա-
նապարհով նա յել վարակվում ե տրախո-
մայով:

Ահա թե ինչու տրախոման սաստիկ տա-
րածված ե այն տեղերում, ուր մարդիկ ապ-
րում են իսավարի ու կեղտի մեջ և չեն հե-
տեսում իրենց մարմնի և հագուստի մաքրու-
թյանը. նա տարածված ե այն ընտանիքնե-
րում, ուր քանի հոգի պառկում են մի մահ-

մակալի վրա, ուր յերեխաների յերեմն
աչքերը սրբում են ընդհանուր յերեսսրբիչ-
ներով կամ կեղտոտ գաթերով: Տրախոման
մեր յերկրում հանդիսանում ե ցարական
անիծյալ ժառանգությունը և խավարի ու
տղիտության մեջ ապրած աշխատավոր մաս-
սաների դարավոր ճնշման հետևանքն ե:

Ներկայումս տրախոման տարեցատրի պա-
կասում ե: Սակայն այս հիվանդությունը
շարունակվում ե տարիներ, և յերկար ժա-
մանակ առանց բժշկվելու մնալուց հետո,
դժվարությամբ ե բժշկվում: Տրախոման ար-
մատախիլ անելու համար մենք դեռ շատ
անելիքներ ունենք: Յեկ այստեղ ամենակա-
րելիք՝ հիվանդությունը կանխելն ե: Յու-
լիաքանչյուր աշխատավոր պետք ե ամեն մի-
ջոց գործադրի, վորպեսզի վարակվելուց զերծ
մնա, վորպեսզի թե իրեն, թե ընտանիքին և թե
ընկերներին պահպանած լինի վարակումից:

Սկզբում տրախոման բոլորովին աննկա-
տելի յե լինում, ու միմիայն բժիշկը, հի-
վանդի կոպերը գարձնելուց և նրանց լորձա-
թաղանթն ուշադրությամբ զննելուց հետո
տրախոման հենց սկզբում հայտնաբերելը
տրախոման հենց սկզբում հայտնաբերելը
շատ կարևոր է, վորովհետեւ սկզբնական շըլ-
շատ կարևոր է, վորովհետեւ սկզբնական շըլ-

Հանում ավելի արագ և ավելի հեշտությամբ կարելի յե բժշկել: Անա ինչու հարկավոր ե բժշկական հետազոտման յենթարկել թե բոլոր չափահաների և թե մանավանդ դպրոցական յերեխաների աչքերը: Սրանց միջև ավելի հաճախ է հաջողվում վրա հասնել հիվանդության սկզբնական շրջանին, արագությամբ լիկվիդացիայի յենթարկել այն ու դրանով տրախոմայի ծավալման առաջն առնել նրանց շրջապատողների միջև:

Տրախոմայով հիվանդանալու սկզբում կոպերի լրձաթաղանթի վրա առաջանում են հատիկաձև և պալարամանան բարձրություններ, վորոնք անհարթ և խորդուբորդ են դարձնում լորձաթաղանթը: Դրա համար ինքը հիվանդությունն ել կոչվում ե «տրախոմա», վոր հայերեն «քերիչ» ե նշանակում: Այս անհարթ մակերևույթների վրա աստիճանաբար գոյանում են սպիներ, վորոնք սկսում են չափազանց տանջել հիվանդին: Այսուհետեւ արդեն հիվանդությունը զգալի յե դառնում վոչ միայն իրեն՝ հիվանդին, այլ նրան շրջապատողների համար:

Հիվանդի կոպերը կիսախուփ են, աչքերն արտասվակալած ու թարախակալած, վախե-

նում են լույսից: Հաճախ կոպերի լեզրերն արտեվանունքների հետ միասին շրջվում են ներսի կողմը, դեպի աչքի խնձորը և գըրդում են նրան, ուստի և հիվանդներն ստիպված են լինում փետել իրենց արտեվանունքները:

Բայց ամենավատն այն ե, վոր հիվանդությունն անցնում ե նաև աչքի խնձորին: Յեղերաթաղանթը պղտորվում ե, սկսում ե նսիմանալ: տեսողությունը շեշտակի թուլանում ե: Ժամանակ առ ժամանակ յեղերաթաղանթի վրա խոցեր են գոյանում, այդ ժամանակ աչքերի մեջ սուր ցավեր են առաջանում, ու հիվանդի զրությունն անտանելի յե զառնում: Վերջիվերջո կարող են գոյանալ աչքի հատեր (ծելեմօ) և կատարյալ կուրություն առաջ բերել: Սպիսավոր շրջանում տրախոման դառնում ե յերկարատես հիվանդություն: Յերբեմն նա թուլանում ե, և հիվանդն արդեն համարյա առողջացած ե համարում իրեն ու սկսում ե աշխատել: ապա մի վորոշ ժամանակից հետո նորից ե սրվում հիվանդությունը, և այն ժամանակ հիվանդը կորցնում ե աշխատելու ընդունակությունը և ոգնություն ե փընտում:

Ի՞նչ պետք է անես, վորպեսզի այս վտանգավոր հիվանդությունից քեզ և ուրիշներին պահպանես:

Դիտակցորեն և ակտիվ կերպով ոգնելով պետությանը արախոմայի դեմ մղված պայքարում, մասնակցելով հասարակական այն բոլոր կազմակերպություններին, վորոնք մղում են այդ պայքարը, յուրաքանչյուր աշխատավոր պարտական և գործադրել նաև մանձնական միջոցառումներ՝ արախոմայից պաշտպանվելու համար։ Մաքուր պահպանել քնակարանները, մանավանդ անկողինները և լվացման պատկանելիքները, խստիվ հեռնել, վոր այդ առարկաներով չոգտվեն արախոմայով հիվանդները. կարգին խնամք տանել յերեխաններին, մարմնի և մանավանդ ձեռքերի մաքրությանը—ահա այն բոլոր միջոցառումները, վորոնք ահագին նշանակություն ունեն արախոման կանխելու համար։

Բայց մանավանդ կարեոր ե՛ յերեք, վոչ մի դեպքում մատներով չդիպչել իր աչքերին, յերբեք նրանց չտրուել ձեռքերով։ Ո՞վ մեզանից կարող ե՛ յերաշխափոր լինել վոր իր ձեռքերը, վորոնցով նա ամբողջ որը զիպչում է ամեն տեսակ առարկաների, դեռձ

այս կամ այն վարակից։ Արտագրության գործիքներ, անտեսական առարկաներ, կենդանիներ, փողեր, դռների բռնակներ, կահ կարասիք — ել ինչ առարկաների ասես չեն զիպչում աշխատավորների ձեռքերն որվա ընթացքում։

Այս բոլոր առարկաներից, վորոնք սովորաբար հարյուրափոր անլիք ձեռքերից են անցնում, ինչպես նաև ծանոթ - անծանոթի ձեռք սեղմելուց, մատների կամ ձեռքի ափերի վրա կարող են նստել — զանազան վարակիչ հիվանդությունների զրգություններ։ Զուր չե, վոր անհրաժեշտաբար պահանջվում ե ուտելուց առաջ ամեն անզամ ձեռքերը լվանալ։ Ավելի ևս խիստ ե մյուս պահանջը, այսինքն՝ անհրաժեշտ գեպքում ձեռք տալ աչքերին՝ սապոնով նոր լվացած մատներով միայն։

Բոլոր արախոմայով հիվանդները — թե նրանք, վորոնք հայտնաբերված կիննեն դըպ-րոցների, ապաստարանների, հանրակացարանների, մսուրների ընդհանուր հետազոտումից հետո, և թե նրանք, վորոնք ինք-նաբերաբար կդան բժշկի մոտ աչքերի հի-նաբերաբար զիպչության պատճառով, պետք ե խկույն վանդության պատճառով, պետք առնվեն՝ վորպես վարակը տարահաշվառքի առնվեն՝ վորպես վարակը

ժողների և անմիջապես բժշկության յենթարկվեն:

Դիտակից հիվանդը չի կարող հրաժարվել տրախոմայի բժշկությունից, վորովհետեւ նա գիտե, թե վիրքան վտանգավոր ե այս հիվանդությունն ինչպես իրեն, այնպես ել շրջապատողների և մանափանդ իր ընտանիքի համար:

Իսկ ինչ վերաբերում ե անգիտակիցներին, բժշկությունն արհամարողներին, — նրանց չեմ ուղղված ե Ժողկոմիորհի 1927 թվի նոյեմբերի 27-ի վորոշումը, վորով արախոմայի բժշկությունը պարտադիր ե հայտարարված:

Բայց այս հիվանդության հարկադրական բժշկությանը մենք համարյա յերբեք չենք զիմում: Տրախոմայի բժշկությունը շատ արագ թեթևացնում ե հիվանդի զրությունը, բարփոքում ե նրա տեսողությունը և աշխատունակ ե դարձնում նրան: Դրա համար ե, վոր արախոմայով հիվանդներն ընդհանրապես սիրով են բժշկում: Ճիշտ ե, հիվանդությունը խորացած գեպքերում, բժշկությունն ամբաներ, յերբեմն ել շատ տաքիներ ե տեղում: Սակայն յեթե հիվանդն ուժությամբ, վերջիվերջո

հաջողվում ե ընդմիշտ փրկել նրան այդ վտանդավոր հիվանդությունից:

Բժշկության կարևոր հետեւանքներից մեկն ել այս ե. նենց վոր բժշկության շնորհիվ դադարում ե աչքերի արտաթորանքը, — իսկ դադար լինում ե շատ շուտ, — հիվանդը դադարում ե վարակիչ լինել ուրիշների համար:

Ըստհանրապես պետք չե տագնապով բռնված վախենալ տրախոմայից, հիվանդների հետ հարաբերություն ունենալուց խուսափել, կամ առողջներից անջատել նրանց: Այդ բոլորը միանգամայն ավելորդ ե և հիվանդի համար ել վիրավորական:

Իհարկե, տրախոմայով հիվանդ դպրոցականներին հարկավոր ե դասարանում առողջներից անջատ նստեցնել և հետեւել, վոր նրանք թաշշինակներ չփոխանակեն առողջների հետ, հարկավոր ե լուսավորել և զիտելիքներ հալորդել նրանց այս հիվանդության մասին: Յեվ ամեն բանից առաջ պետք ե նրանց բժշկել մասնագետ բժշկի մոտ: Հիվանդների և առողջների այսպիսի մեկուսացումը ցանկալի յե նաև մանկատներում և հանրակացարաններում: Բայց հասակն առած զիտակից քաքաքացին, վոր արախոմայով հիվանդ ե, և առողջ մարդը, վոր պահ-

պանում ե նախազգուշական կանոնները,
կարող են իրար հետ հաղորդակցություն ու-
նենալ, առանց վախճանալու, թե հիվանդը
կարող ե առողջին վարակել:

Պետք ե միայն չմոռանալ, վոր դաշտում
պայծառ արելի տակ, քամու և մանավանդ
փոշու մեջ տրախոման հաճախ սրվում ե,
վորի հետ միաժամանակ ուժեղանում ե նաև
վարակային արտաթորանքը:

8

VI.

ԱՉՔԻ ՎՆԱՍՈՒՄՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒ- ԹՅԱՆ ՄԵԶ

Գյուղատնտեսական աշխատանքի ընթաց-
քում պատահում են այլ կարգի մնասություն-
ներ, քան թե գործարանային աշխատանքի
ժամանակ բանվորների հետ Այստեղ կա հող,
գոմաղբ, խոտ, կենդանիներ և այլն, այս
բոլորը կրում են իրենց մեջ և իրենց վրա
բազմաթիվ ու բազմատեսակ բակտերիաներ,
վորոնք յերբեմն կարող են մեծ մնասներ հաս-
ցնել: Դաշտում, աշխատանքի ժամանակ, մե-
քենաները աղբակալվում են փոշով, հարդի
մղեղով և այլն: Անձեռային յեղանակներին
անհնարին բան և աղատ մնալ ցեխութելուց,

քանի վոր չորս կողմությունություն առարկաներն
ել ցեխի մեջ կորած են: չոր յեղանակներին
ել մանավանդ յերբ քամին փչում ե, չես
կարող զերծ մնալ փոշուց, վոր ամպի նման
տարվելով նստում ե ամեն մի առարկայի
վրա, ինչպես նաև հագուստի, յերեսի ու
ձեռքերի վրա:

Վորովհետեւ աչքերի մեջ ընկնող փոշին
կեղտուտ ե լինում, նրան պատճառած թեկուզ
փոքրիկ վերքերը վարակվում են բակտերիա-
ներով: Աչքերի կեղտուտվելուն նպաստում
են նաև հիվանդի՝ կեղտուտ, փոշուտ մատնե-
րով իրեն ոգնելու փորձերը: Վերջապես անհր-
բաժեշտ բժշկական ոգնությունն ել իսկույն
չի համարում, այլ յերբեմն յերկար ժամանակ
ե անցնում: Այսպես են գյուղատնտեսական
աշխատանքի պայմանները, վորոնք և կարող
են մնասել աչքերին:

Հիմա տեսնենք՝ ինչ մնաներ են դրանք
և ինչպես պահպանվել նրանցից:

Պետք ե իմանալ, վոր թե լավ և թե վատ
յեղանակներին գյուղատնտեսական աշխա-
տանքներից շատերը բացոթյա յեն կատար-
վում: Պայծառ արել, ուժգին քամին, մանա-
վանդ չոր և պաղ քամին, գրգուում են աչ-
քերը, չորացնելով և հովացնելով նրանց: Աչ-
քերը, չորացնելով և հովացնելով նրանց:

քերը առաջնելու և թրջելու համար առատորեն արտադրվում ե արցունքային հեղուկը. կոպերը շուտ-շուտ թարթում են և առատ արցունքն արցունքատար անցքերով գնում ե զեղի քիթն, ուր և գորոշանում ե, Արցունքն ե, փոք լվանում, տանում ե թե բազմատեսակ կողմնակի նյութերը և թե բակտերիաները, վորոնք ընկնում են աչքերի մեջ, բաց կոպերի մեջտեղը. Այսպես և լինում այն ժամանակ, յերբ արցունքատար անցքերը բավականաշափ բաց են: Այս դեպքում վոռոգող և մաքրող գործիքը լավ է աշխատում:

Բայց կան շատ մարդիկ և մանավանդ մանուկ հասակում քիթի գեղձախտ ունեցածներ կամ այլ նման հիվանդությամբ տառապողներ, վորոնց ացունքատար անցքերը կարող են նեղ լինել: Այս դեպքում արտասուրքը մնում է աչքերում, լճանում ե: Դաշտում աշխատանքի ժամանակ, ցուրտ և քամի յեղանակն, արցունքն առատորեն դուրս և թափվում կոպերի յեղբերից, հոսում ե այտերի վրա ու թրջում դեմքի մաշկը: Արցունքից պղտորվում են աչքերը, և աշխատանքը խանգարվում ե: Աշխատավորը ջանում ե սրբության աչքերը. դրա համար նա գործի յե դնում կեղտութ մասները, ձեռքի ափը

թեքերը, զգեստի փեշեր, վորոնք նույնպես բավականաշափ կեղտութված են:

Այսպես ուրիմն, քամու, պայծառ լույսի կամ ցրտի պատճառով աչքի անմեղ գրգռումը կարող ե աստիճանաբար փոխվել կոպերի յեղբերի և լորձաթաղանթի իսկական քրոնիկական բորբոքման:

Աչքերի մեջ արցունքահեղուկի լճանալը վնասակար ե նաև այլ տեսակետից: Նման արտասուրքի մեջ, ինչպես և արցունքատար այն անցքերում, վորոնք նորմալ արցունքով չեն լվացվում, առատորեն զարգանում են միկրոբներ, վորոնց-թվում նաև առողջության համար վնասակար միկրոբներ: Այս լեզանակով առաջանում ե արցունքապարկի բորբումը, աւտիֆնքն՝ միկոքրիկ և եղերվուարի (ջրամբար), վոր հավաքում ե արցունքահեղուկը և գտնվում ե աչքի կապիճի քթանկունի մոտ, մաշկի տակ: Այս հիվանդության ժամանակ արցունքապարկում գոյացած թարախը լցվում է աչքի մեջ, լորձաթաղանթի վրա և հարատես բորբոքում առաջնում: Այս թարախի մեջ գտնված բակտերիաները հայտնի յեն աչքի խնձորի համար իրենց վնասակար հատկությամբ, սակայն անկարող են միանգամից ցուցաբերել

իրենց վտանգալի ազդեցությունը միայն այն պատճառով, վոր յեղջերաթաղանթը ծածկված է միկրոբներ չանցկացնաղ, պաշտպանող թաղանթով։ Բայց վատ ե, յերբ թաղանթը փորսե կերպով վնասված լինի։

Դաշտի ողը միշտ մաքուր և անփոշի չի լինում։ Մեզ մոտ, հարավում, ամառը մեծ մասամբ չորային ե և արեարեգակ որեր շատ են լինում։ Հաճախ փոշում են փոշի բարձրացնող արևելյան քամիները, վորոնք փոշունետ միաժամանակ բերում են զանազան թափթփուկներ, չորացած ու մանրացած գոմաղբի մացորդներ և այլն։ Շարժվող, փոշու ողը շատ ավելի յե զրգուում մարդու աչքերը, քան փոշի ողը։ Քամին փշելուց՝ փոշին բաց կոպերի միջով լնկնում ե աչքերի մեջ։ Աչքի այս մասը, մշտական գրգուումից կոշտանում ե, յեղջերաթաղանթի մեջ գանվող լորձաթաշնթը հաստանում, մեծանում ե, իսկ յերեմն ել քթի կողմից պատում ե թևանման կոչվող բարակ թաղանթով։ Դանդաղորեն առաջ գնալով գեպի բիբը, այս բարակ թաղանթը կարող է տեսողության խոշոր խանգարում առաջացնել, վորպիսի խանգարումը բժիշկները վերացնում են ոպերացիայի միջոցով։

Դրությունն ավելի յե ծանրանում, յեթե աչքի մեջ մտնող առարկաները շատ մանր չեն և ուժգին թափով են մտել։ Այս դեպքում նրանք կարող են վնասել յեղջերաթաղանթի պաշտպանողական ծածկոցը և խրվել աչքի մեջ։ Իսկ դա սպառնում ե աչքին յեղջերաթաղանթի բորբոքում առաջ բերել և վերք գոյացնել՝ շնորհիվ այն բակտերիաների, վորոնք կամ աչքը վնասված միջոցին թափվում են վերքի մեջ, կամ լորձաթաղանթից և արցունքապարկից վերքի միջով ներս են թափանցում։

Այնից հաճախ՝ հուլիս, ոգոստոս և սեպտեմբեր ամիսներին, պակաս հաճախ՝ մյուս ամիսներին և բոլորովին սակավ՝ ձմեռները մենք, ակնաբուժներս, անհանգստությամբ դիտում և բժշկում ենք այս վերքերից ամենավտանգավորը, վոր կոչվում ե յեղջերաթաղանթի Տարածուն խոց։

Յեղջերաթաղանթի վրա հազիվ տեսանելի, վորքիկ ճանկովածքը կամ վերքը, վոր գոյացել ե դաշտում աշխատելու ժամանակ, ճանապարհ ե բաց անում վարակի առաջ։ Փոքրիկ ճանկովածքը դառնում ե թարախոս, աչքը սաստիկ բորբոքվում ե և անխոց, աչքը սաստիկ բորբոքվում ե և անտանելի ցավ և պատճառում։ Ու հիվանդը,

լավագույն գեպքում, բժշկության ներկա պայմաններում, ընդմիշտ ստանում և աչքի հատ, նրա տեսողությունը թուլանում է, և յերբեմն ելքոլորովին զբկվում աչքի լույսից:

Աչքի այդպիսի վնասումները միայն դաշտային աշխատանքների (բերքաճափաքի, կալի, կալսիչ մեքենանի վրա աշխատելու և այլն) ժամանակ չեն, վոր պատահում են: Դաշտում, այգում, բանջարանոցում, բակում աշխատելիս կարելի յե աչքերին նույնպես վերք հասցնել վոստիկներով, ճյուղերով, քոլերով և այլն: Այս բոլոր առարկաներն արդեն ինքնին կարող են կեղտոտել վերքը, բայց յերբ աչքի լորձաթաղանթի վրա կան ծնասակար բակտերիաներ, արտաքուստ աննշան վերքն ել կարող և փոխվել զարհուրելի հիվանդության:

Գյուղատնտեսական աշխատանքի ժամանակ առաջացած վիրավորումների շարքում հատուկ տեղ են բռնում ընտանի կենդանիների և հատկապես լծկանի պատճառած վերքերը: Պատահում են, վոր ծիերո, յեղջյուրավոր կենդանիները յերբեմն հարվածում են աշխատավորին սմբակներով, ազիյով (պոչով), դիլով ու յեղջյուրներով. նման հարվածներից գոյացած վերքերը շատ ծանր են ինում: Այդ հարվածները շատ անգամ ջար-

դում են աշխատողի գեմքը, ճեղքում են կոպերը, ծակում են աչքի խնձորը՝ կեղտոտ վերքերից սպասելիք բոլոր վտանգավոր հետեւանքներով:

Մենք ավելորդ ենք համարում այստեղ թվարկել գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ առաջ յեկած վնասների բոլոր տեսակները: Յուրաքանչյուր աշխատանքն ունի իր վտանգավոր կողմերը, յեթե կատարվում ե անուշաղբությամբ և անշնորք կերպով:

Ավելի լավ է խոսենք այն մասին, թե ինչպես պահպանել, ինչպես պաշտպանել աչքերն այն վնասակարություններից. վորոնք շաղկապված են գյուղատնտեսական աշխատանքի հատուկ պայմանների հետ:

VII.

ԻՆՉՊԵՍ ՊԱՅՄԱՐԵԼ ԱՇՔԻ ՎՆԱՍՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Խորհրդային բուժագիտությունն իրավամբ պարծենում ե, վոր իր հիմքում նախ և առաջ դրված ե հիվանդությունները կանինելու խնդիրը:

Մենք մինչև անգամ չենք ասում «բուժագիտություն», բժշկություն, այլ պարզապես—առողջապահություն։ Այսպես ել աշքերի հիվանդությունների դեմ պայքարում ամենալիմավոր խնդիրը — աշխատավորների աշքերը վնասակար ներգործություններից պահպաննեն։ Եւ

Վերեւում մենք արդեն խոսեցինք, թե ինչպես ե հարկավոր պայքարել տրախումայի դեմ։ Նույն կանոնները հարկավոր ե պահպանել նաև տեսողության որդանի վնասումների դեմ մզվող պայքարում։

Գիտենալով այդ վնասումների պատճառները, գիտենալով նույնպես, թե ինչ հանդամանքներում թեթև վերքերը կարող են վտանգավոր դառնալ աշքերի համար, մենք կասկանանք, վոր պայքարը պետք ե մզվի յերկու քրոնառում։ 1) մի կողմից՝ հարկավոր ե առողջացնել արտադրությունը, ըստ հնարավորության անվտանգ գարձնել նրան աշխատավորների աշքի համար, 2) մյուս կողմից՝ անհրաժեշտ ե առողջացնել աշքերը, վորպեսզի նրանց մեջ ընկնող վնասակար նյութերի ներգործությունը թուլանա:

Ամենից առաջ, գյուղատնտեսական յուրաքանչյաւը աշխատանք, վորքան ել նա շտապ-

քնույթ ունենա, պետք ե կատարվի ուշադրությամբ, գործիմացությամբ։ Յուրաքանչյուր աշխատավոր, վորին հանձնարարված ե վորոշ վործ՝ պարտական ե լավ իմանալ այն, պարտական ե սիրապետել տեխնիկային, ընօրենվ վարվել գործիքների ու մեթենաների նես։ Այս ժամանակ նա լավ կգիտենա նաև այն բաները, վորոնք վնասակար են աչքի համար ու նեշտությամբ կխուսափի նրանցից։ Շտապ և անկարգ աշխատելիս, անփորձ աշխատողը, վոր կատարում ե անսովոր աշխատանք, նեշտությամբ կարող ե զոհ գտնալ դժբախտ պատահարի, ել չենք ասում, վոր կատարած աշխատանքն ել վատ արդյունք ե տալիս։

Ամառվա տոթի և փոշի բարձրացնող չորքամիների մնասակար ներգործությունը կարելի յե վերցնել կամ թուլացնել՝ աշխատելու ժամանակ պաշտպանողական ակնոց գործածելով։ Դրանք գլխավորապես անհրաժեշտ են այն աշխատանքների ժամանակ, վորոնք ավելի շատ աղք և փոշի յեն առաջացնում, որինակ, կալուիչ և քամնար մեքենաների մոտ։ Պաշտպանողական ակնոցներ պետք ե ունենան նաև ՄՏ կայաների արհեստանոցների բանվորները, դարբինները, փականագործ-

ները, ճախարակները, և նրանք, վորոնք գործ ունեն մետաղի մշակման, նրա տաշեղների և կտորտանքների հետ, վորոնք կարող են աչքերի մեջ ընկնել:

Լավ մեքենան, վոր պահվում ե մաքուր և կարգին ու կանոնավոր կերպով աշխատում ե, ավելի քիչ ե վնաս հասցնում մեր որդաններին, վորոնց թվում նաև աչքերին, քան թե այն մեքենան, վոր վատ ե նորոգված, աշխատում ե խափանումներով կեղտոտե և աշխատանքի ժամանակ կարիք ե զգում հաճախակի ստուգման: Հետեաբար մեքենայի նախորոք կատարված նորոգումը և նրան լավ խնամք տանելն եյական պայմանն ե վոչ միայն արտադրանքի քանակի և վորակի բարձրացման, այլև բանվորի անվտանգության՝ աշխատանքի ժամանակ: Նույնը վերաբերում ե նաև գյուղատնտեսական կենդանիների կողմից աչքերին հասցըված վնասումներին:

Զիապանը, վոր գործ ունի ձիերի հետ, անասնապահը, վոր աշխատում ե կաթի ֆերմայում, կովերի կողքին, գիտեն, վոր յերբ կենդանիների հետ լավ վարվեն, ուշադիր կերպով խնամեն նրանց, ապա նրանց հասցրած վնասներն ել հազվագյուտ դեպքեր կը լինեն:

Խորհունտեսություններում և կոլտնտեսություններում բժշկական ոգնությունն ընդհուպ մոտեցել ե աշխատավորներին: Նրա գլխավոր հիմնարկները, հեվանդանոցներն էրենց մասնագետ-բժիշկներով, սովորաբար ՄՏ կայաններումն են գտնվում: Սեղոնային աշխատանքների ժամանակ դաշտ են ուղարկվում բժշկական շարժական ջոկատներ, վորոնք իրենց հետ ունեն բոլոր անհրաժեշտ պիտույքները: Դա նույնն ե, ինչ վոր Փարբիկներում և գործարաններում գոնված առողջապահական և նախնական ոգնության պունկտերը:

Աչքի վորեև վնասում սաւացողներն անմիջապես պետք ե ստանան այդ նախնական ոգնությունը: Զպետք ե թույլ տալ, վոր բանվորը կամ կոլտնտեսականն իր կամ իր ընկերների կեղտոտ ձեռքերով փորձեր անի աչքերը բժշկելու: Այդ դեպքում թեթև վրնասվածքն իսկ կարող ե ծանր հիվանդության փոխվել: Վնասված աչքի համար շատ կարել ե հենց այդ առաջին, մաքուր և կանոնավոր ոգնությունը, վոր կատարվում ե բժրշկական գիտակ աշխատավորի ձեռքով:

Դեմքի և կոպերի վերքերը, նրանց ընդարձակ պատովածքները, նույնիսկ կովի յեղակ պատովածքները,

Այսորներով կամ մետաղի կտորներով աչքի խնձորի ճեղփածքը շուտով լավանում են, և աչքն ել հաճախ փրկվում ե, յեթե միայն վերքի փոշին, հողն ու բոլոր աղբերը մաքրված են, վերքը լվացված ե հականեխիչ լուծույթով, վրան քոված ե յոդ, կանոնավոր կարգած ու կապված ե: Բայց այս ամենը պետք ե անել անմիջապես և բժշկական պերանալի մաքուր և հմուտ ձեռքերով:

Աչքի մեջ ընկած և հաճախ վերի կոպերի տակը խրված սերմերի կճեպը, հարդի մղեղը, միջատի թերը, բղեղները դուրս հանելու այս փոքրիկ ոզնությունն անդամ, վոր խսկույն վերջ ե զնում սոսկալի ցավին, պետք ե կատարվի միայն վարժ ձեռքերով: Հարկավոր ե գեպի դուրս դարձնել վերի կոսը, տեսնել խրված առարկան և զգուշաբար հանել այն բամբակի, մառլայի կտորով կամ թաշկինակի ծայրով:

Աշխատանքից կոշտացած ու անլիվա մատները, վորոնք անվարժ են սույն գործողությանը, կամենալով գեպի դուրս դարձնել կոպերն, ավելի ևս գրգոռում են աչքը և միայն մնաւում են նրան: Հիվանդն սկսում է ինքն իրեն ոգնել, մատներով տրորում ե աչքերը, ձգում ե արտեսանունքները՝ կոպերը

գարձնելու համար, բայց գրանով աչքի մեջ ընկած առարկան ավելի պիհող ե նստում այս գործողություններից բորբոքված լորձաթաղանթի վրա:

Ցարական Ռուսաստանում, յերբ հետամաց և խղճուկ գյուղն իսպառ զրկված եր բժշկական ոզնությունից, բժշկությամբ պարապվում եյին տեղական գրբացներն ու զըրբացուհիներն, այսպես կոչված՝ «հաքիմները». Սրանց ձեռքից մանավանդ աչքերն եյին տուժում: Մինչև այժմ ել տեղ-տեղ կան «հաքիմներ», վորոնք լեզվով են հանում աչքի մեջ ընկած առարկաները: Դա վերին աստիճանի վրգովեցուցիչ գործ ե: Վրդովեցուցիչն այն ե, վոր կան քաղաքացիներ, վորոնք թույլ են տալիս, վորպեսզի վարակված բերանով ու փոտած ատամներով զանազան «հաքիմներ» իրենց կեղտոտ լեզուն նրանց աչքի մեջ խոթեն: Յես անձամբ տեսել եմ կոպերի նոր սիֆիլիսի մի քանի գեպքեր, վորոնք լեզվով աչքի միջից առարկաներ հանելու հետեւսնքն են: Հին ժամանակներում նկարագրված ե մի գեպք, յերբ սիֆիլիս ունեցող մի «հաքիմ» կին այս յեղանակով կազանի նահանգում մոտ 40 մարդ ե վարակել սիֆիլիսով:


Ներկայումս մեր լեռկրում նման գեղաքերն այլևս անկարելի յեն: Սակայն «հեքիմության» գեմ պայքարը դեռ չի վերջացած, և այս պայքարում գիտակից կոլտնտեսականները պետք ե վերջին ջախջախիչ հարվածը հասցնեն անփայլ անցյալի այս այլանդակ մնացորդներին:

Առողջ աչքերն ափելի հեշտությամբ են տանում զանազան մխասվածությունները, քանի թե կոպերի, նրանց լորձաթաղանթի, արցունքավազկի և այլնի բորբոքում ունեցող հիվանդ աչքերը:

Պետք ե իմանալ, վոր բոլորովին առողջ աչքերն ել կարող են թույլ տեսողություն ունենալ: Պատահում ե, վոր աչքի թափանցիկ նյութերը, փորոնք լույսի ճառագայթներն են հավաքում, տալիս են արտաքին առարկաների պարզ լուսապատկերը, բայց այդ լուսապատկերն ինչպես հարկն ե չի ընկնում աչքի նյարդային թաղանթի (ցանցաթաղանթի) վրա, հետևաբար այս լուսապատկերը լինում է աղոտ, և շատ անգետամ ել վոչ պարզ:


Կարճատեսների ցանցաթաղանթը գտնվում է հեռավոր առարկաներից ստացվող լուսապատկերի յետևում: Հեռատեսների և

մանավանդ տարիքավորների ցանցաթաղանթը գտնվում է մերձավոր առարկաներից ստացվող պարզ լուսապատկերի առջևում: Դրա համար ե, վոր կարձատեսները հեռուն վատ են տեսնում, իսկ մոտիկ առարկաները վորոշում են պարզ և հեշտությամբ: Հեռատեսներն, ընդհակառակը—հեռուն լավ են տեսնում, բայց մոտ տարածության վրա աշխատելիս շուտ հոգնում են, նամանավանդ տարիքավորները:




Նկար 4: Կարճատես յեվ հեռատես աչքերը: ա) հեռավոր առարկաներից ստացվող լույսի նառագայթների ուղին կարճատես աչքում:

1) Հեռավոր առարկաների ճառագայթների հավաքման (լուսապատկերների) տեղը. 2) ցանցաթաղանթը. 3) առաղական նյարդը. 4) գորգավոր պապակիցով կարելի յեցանցաթաղանթի վրա միացնել ճառագայթները: Առանց ապահովանքի միացնել հեռավոր առարկաներից ստացվող լույսը տալիս է պահունակությունը: Առանց ապահովանքի միացնել լուսապատկերը պարզ չեն:




Նկար 4. Բ. Մերձավոր առարկաներից ստացվող լույսի ճապագայթների ուղին կարևոտես աշխատ:

1) Ճառագայթների հավաքման տեղը զուգաղիպում և ցանցաթաղանթի հետ. մերձավոր առարկաներից ստացվող լույսը առլիս և լուսապատկեր ուղղակի ցանցաթաղանթի վրա. Առարկաները պարզ են յերեղում:



Նկար 4. Կ. Հետավոր առարկաներից ստացվող լույսի ճապագայթների ուղին հեռաւնես յել նորմալ աշերբում:

2) Հեռավոր առարկաներից ստացվող լույսը կարող է լուսապատկեր տալ ուղղակի ցանցաթաղանթի վրա. հեռավոր առարկաները պարզ են տեսնելում:



Նկար 4. Դ. Մերձավոր առարկաներից ստացվող լույսի ճապագայթների ուղին տարիխալոր մարդկանց հեռաւնես յել նարմալ աշերբում:

1) Առանց ապակու՝ մերձավոր առարկաներից ստացվող լույսը հավաքվում է ցանցաթաղանթի յետեր. ցանցաթաղանթի վրա լուսանկարը պարզ չէ. առանց ակնոցի մերձավոր առարկաները պարզ չեն. 2) ցանցաթաղանթը. 3) կորնթարդ ապակիյուղ լույսը կարելի յել հավաքի ուղղակի ցանցաթաղանթի վրա. պետք են կորնթարդ ապակիներ:

Ի՞նչ ե հետեւում սրանից: Հետեւում ե, վոր կարծատես մարդկանց, առանց ակնոցի, չըպետք և թույլ տալ գյուղաանտեսական մեքենաների մոտ աշխատանք կատարելու, ինչպես նաև լծկանների հետ գործ ունենալու նրանց տեղը կոչկակարի և զերծակի ար հետանոցներն են, նույնպես և գրասենյակները, պահեստարանները և այլն: Յեթե կարծատեսությունը շատ ուժեղ չէ, կարծատեսները կարող են կատարել նաև ուրիշ աշխատանքներ, բայց անպատճառ ակնոցով

Այն տարիքավոր հեռատեսները, վորոնք աչքերին մոտիկ տարածության վրա յեն աշխատում, պետք ենույնպես ակնոց ունենան:

Աշխատանքը դասավորելիս, այս ամենը պետք ե ինկատի ունենալ և ուշադրության առնել: Ամեն աշխատավոր պետք ե գործի դրվի՝ նախած նրա գիտությանը, նրա ուժին և աչքերին:

VIII

ԿՐԻՅ ՅԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԻՅ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԱՉԳԵՐԻ ՎՆՍՍՈՒՄՆԵՐԸ

Խորհրդային Միության հարավային ռայոններում աները սովորաբար կը ով են սպիտակացնում: Կրի պատճառով ստացած աչքերի վնասումները, դժբախտաբար, հազվադեպ յերեվույթներից չեն, հետեվաբար անհրաժեշտ ե միքանի խոսք առելնրանց մասին:

Կրը, իր բոլոր տեսակներով, վտանգափոր ե աչքերի համար: Տեսողության համար ամենավտանգափորը չհանդած կիրն ե, յերբ նրա վրա ջուր են ածում: Այդ միջոցին կիրը յեռ ե գալիս, չորս կողմը կաթիլներ ե շաղ տալիս, վորոնք և կարող են այդ աշխատանքը կատարողների կամ դի-

տողների աչքերն ընկնել: Բայց սաստկապես ուտում ե աչքը նաև հանգած կիրը, ինչպես և կրակաթը, ավազոտ կիրը, ցեմենտը, սվաղը: Ստացվում են կոպերի, լորձաթաղանթի և, վոր ամենից վատն ե, յեղջերաթաղանթի այրոցքներ: Կրի փոքրիկ կտորները խրվում են կոպերի տակ, գրգռում են աչքը և, բացի այսպիսի մեխանիկական ներդրությունից, կատարում են նաև ուտիչ գործողություն կամ, ինչպես ասում են, քիմիական այրոցք են առաջ բերում: Ծանր դեպքերում յեղջերաթաղանթը կարող է սպիտակել խաշած հավկիթի սպիտակուցի նման և ընդմիշտ կորցնել եր թափանցիկությունը: Այն ժամանակ կուրությունն անխուսափելի յե և անբռուժելի: Թեթև գեպքերում ևս հաճախ մնում են աչքի հատերը, վորոնք զգալի չափով նվազեցնում են տեսողությունը: Բժշկությունը դանդաղ ե ընթանում և այն ել սաստիկ ցավերով:

Նման փորձանքից զերծ մնալու համար պետք ե լավ ծանոթ լինել կրի հատկություններին ու նրա մշակումը հանձնել գիտակ անձերի: Հետաքրքրվողները և մասնավանդ յերեխաներն այստեղ ներկա չպետք ե լինեն: Յեռ հիշում եմ մի գեպք, յերբ յե-

սացող կրի մեջ խաշվեց մի ամբողջ ընտանեք՝ հայր, մայր և յերեք յերեխա՝ գաղթականներ հյուսիսից, վորոնք առաջ բնակվել են գերանաշեն տներում. Նրանք մտածեցին ամբողջ ընտանիքով կիր հանգինել՝ իրենց խըրձիթը սփաղելու համար. բոլորն ել հետաքրքրությամբ նայում եյին տակառին, ուր յեռում եր կիրը: Նրանցից յերեքը զրկվեցին իրենց մեկական աչքից, իսկ մյուս աչքերը հաջողվեց փրկել՝ տեսողության մասնակի կորստով:

Յերբ աչքի մեջ կիր ընկնի, իսկույն հարկափոր ե բժշկական ոգնության դիմել: Իսկ մինչ այդ՝ պետք ե առանց մի րոպե կորցնելու, ամեն տեսակ միջոցներով հանել աչքի մեջ ընկած չոր նյութը, կասեցնելու կամ դադարեցնելու համար նրա հետաքա ուտիչ նեղորդությունը: Այս գեպքում լավագույն և, թերեւ, միակ միջոցը վախուր ջրով աչքիր լվանալու ե:

Լավ կլինի նաև կոպերը դարձնել և մաքրել աչքի մեջ ընկած կրի մանր ու խոշոր կտորները, վորոնք խրվել են կոպերի տակ, լորձաթաղանթի վրա: Բայց դարձնել կոպերը, այն ել այլրած, պինդ ուղմած աչքերի կոպերը, վոչ վոք չի կարող, բացի բժշկից կամ

հմուտ բուժաքողից: Դրա համար մինչեւ բուժպերսոնալի զալն ահնրաժեշտ ե անդադար լվանալ աչքերը մաքուր և, ափելի լավ ե, յեռացրած ջրով, ու հետեւ ձեռքի և անոթների մաքրությանը: Այնուհետև արգեն, վորքան կարելի յե շուտով, հիվանդին պետք է հանձնել բժշկի խնամքին:

Մեր գլուղատնտեսության մեջ ներկայումս լայնորեն կիրառվում են զանազան գաղանման, հեղուկ և թանձր քիմիական նյութեր: Դրանցից մի քանիսը—գաշտերի, ալգիների և բանջարանոցների վնասատուներին վոչնչացնելու համար, մյուսները—սերմեր ախտահանելու համար և այլն:

Այս նյութերից շատերը ուտիչ հատկություն ունեն և, աչքի մեջ ընկնելով, կարող են մեծ վնաս հասցնել նրան: Բայց նման գեպքերը չափազանց քիչ են, վորովհետև քիմիական նյութերի հետ սովորաբար գործ ունեն մասն ագետները: Բայց ամեն անգամ, յերբ հարկ ե լինում զործ ունենալ քիմիական նյութերի հետ, պետք ե գործադրել նախազգուշական բոլոր միջոցառումները և անպատճառ կատարել բուժպերսոնալի կամ մասնագետների խորհուրդներն ու ցուցմունքները:

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՉՔԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ ՎՆԱՍՈՒՄՆԵՐԸ. ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՉՔԻ
ԱՌՈՂԶՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Այս գեղաքերում, յերբ յերեխաները մնում են առանց հսկողության, նրանք հաճախ վնասում են իրենց տչքերը։ Յեզ տեղն ե բացեիքաց ասելու, վոր մանկական աչքերի այս վնասումները լինում են շատ ծանր և մեծ մասամբ վերջանում են տեսողության կամ ամբողջական, կամ մասնակի կորստով։ Աչքերի այս վնասումները լինում են զանազան տեսակի և կախում ունեն յերեխաների հասակից և այն առարկաներից, վորոնցով շրջապատված են նրանք և վորոնք ընկնում են նրանց ձեռքը։

Այսպես, վոքքիկ մանուկները, վորոնք դեռ վատ են քայլում և ավելի վորսող են տալիս, մտնում են քակում կամ մարագում հարդի քոլերի ու խոտերի մեջ։ Այս առարկաների կտորատանքները, հարդի մղեղները, ծղոտիկները, հասկի քիստերը (օստիու) մտնում են աչքերը։ Մանուկները լաց են լինում, ձեռքերով աչքերն են տրորում, վորով և աչքերի բորբոքում են առաջացնում։

Տնեցիք չեն հասկանում բանն ինչումն ե, իսկ մանուկն ել անգոր ե բացատրելու։ Սկսվում է կոպի լորձաթաղանթի բոլբոքումը, աչքը խիստ ուռչում, թարախակալում ե։ Յերեխային տանում են բժշկի, սա, ինչպես հարկն ե, դարձնում ե կոպի, ուշիուշով տնտիղում ե ուռած լորձաթաղանթի բոլոր ծալքերը ու դուրս հանում «քիստը»։ Հիվանդությունն արագ անցնում ե։

Փոքը ինչ մեծ յերեխաներն սկսում են ման գալ վազվզել սենյակում և վերցնել զանազան իրեր և առարկաներ։ Նրանց անփորձ ձեռքերում մանավանդ վտանգավոր են սրածայր ու ծակող առարկաները, ինչպես զանակը, մախաթը (բիզը), պատառաքաղը, մկրտառը, Վտանգավոր են նաև լուցկիները։ Ձեռքերով այս ու այն կողմ շարժումներ անելիս կամ անվարժ ձեռքերով այդ առարկաներն ոգտագործելիս, յերեխան հեշտությամբ կարող ե կամ իր սեփական կամ խաղակից յերեխաներից մեկնումնեկի աչքերը դրանցով հարվածել։ Հենց այդպես ել պատառում ե կյանքի մեջ։ Աչքը վտանգավոր կերպով վնասվում ե ու ծակվում։ Դարձն հետեւ կանքով հաճախ բոլորովին փչանցանց հետեւ կանքով հաճախ բոլորովին փչանցում ե աչքը, վորովին տան մեջ գտնված

Նման առարկաները սովորաբար մաքուր չեն լինում. դրա համար ել ստացված վերքն ու ամրող աչքը կեղտոտվում ու վարակվում են. Մենք, ակնաբուժներս, շատ ենք հանդիպում աչքերի այդ տեսակ վնասումների ու ստիպված ենք լինում վնասված աչքն իսպառ հանելու՝ առողջ աչքը վարակումից փրկելու համար:

Ավելի մեծ հասակի տղաները սովորաբար շատ են տարվում նետողական գործիքներով և հրազեններով։ Նրանք իրար վրանետեր են արձակում, պարսատիկից քարեր են նետում, կրակում են ինքնաձեռագործ փշտովներից, խաղալիք ատրճանակներից, քարով զարկում են պիստոններին և այնուհետև խաղերը շատ են վնասում աչքերին։ Դրանց պատճառած վերքերը շատ բարդ են ու վնաս են հասցնում աչքի խնձորին, հաճախ ել պիստոնի կտորտանքներն աչքի մեջ են խրվում։ Այս գեղքում անհրաժեշտ ե անսմիջապես տեղահան անել աչքը Ավելի թեթև վիրավորումների ժամանակ հնարավոր ե լինում փրկել աչքը, սակայն տեսողությունն ինարկե վորոշ չափով տուժում ե.

Անկարելի յէ թվարկել այն բոլոր առարկաները, վորոնցով յերեխանները վիրավորում

են իրենց աչքերը, անկարելի յէ թվարկել այն բոլոր հանգամանքները, վորոնք առաջացնում են նման վիրավորումներ։ Յերեխանները դեռ չեն գիտակցում վտանգը. նրանք դեռ վարչել չգիտեն այն առարկաների հետ, վորոնք զգուշություն և ուշադրություն են պահանջում։ Վերջապես պետք ե նկատի ունենալ, վոր առորյա կյանքում գործածվող առարկաները և տնային պիտույքները հաճախ սառն են, փոշոտ և կեղտոտ։ Հենց դրա համար ել յերեխանների աչքերի վիրավորումներն ավելի բարդ են և կուրության տոկուն ել ավելի մեծ, քան հասակավորներինը։

Մեր յերախանների ընդհանուր առողջությունը պահպաննելու գործում կարեվոր տեղ պետք ե հատկացվի տեսողության որգանի խնամքին։ Նախ և առաջ յերեխաններին չպետք ե մենակ թողնել, առանց հսկողության։ Յերբ ծնողները գնում են աշխատելու, յերեխանները պետք ե հանձնվեն ուշագիր և վորձառու մարդկանց հսկողությանը։ Հին ժամանակներում և դեռ հիմա յել մենատնտեսներն իրենց յերեխաններին թողնում են կիսակույր և բոլորովին զառամյալ ծերերի ու պառակների խնամքին, վորնոնք իվիճակի չեն յերեխաններին հետեւկելու, ույժ չունեն աշխատյաց բոլորովին զառամյալ ծերերի համար։

մանուկների յետեվից համնելու և վերջապես
անկարող են խելացի խաղերով նրանց զբա-
ղեցնելու:

Երությունը չի լավանում նույնպես,
յերբ մայրը հետն ե տանում յերեխային ու,
աշխատանքի սկսելիս, տեղավորում ե նրան
կամ թփի, կամ դեղի տակ: Դա իհարկե վատ
հսկողություն ե: Յերեխայի յերեսին ճանձեր
են նոտում, միջատներ են սողում, քամին
ել ամեն տեսակ աղբ և փոշի յե փչում:
Բնական ե, վոր այս տուարկաները կարող
են և աչքը մտնել: Իսկ յեթե յերեխան ար-
դեն կարողանում ե չորեքթաթ կամ վոտիկ-
ներով քայլել, այդ դեպքում վտանգն ավելի
մեծ ե լինում:

Այլ բան ե կոլտնտեսության մեջ: Յեթե
յերեխայի առողջության խնամածությունը
կազմակերպված ե ինչպես հարկն ե, ապա
կարելի յե միամիտ լինել նրանց աչքի նկատ-
մամբ: Այստեղ ամեն հասակի յերեխաների
համար բաց են անում հատուկ հիմնարկներ,
ինչպես՝ մանկամսուրներ, մանկապարտեզներ,
հրապարակներ:

Տեսողությունը լավ պահպանելու համար
մանկամսուրները, հրապարակները, մանկա-
պարտեզները և դպրոցները պետք ե կանո-

նավոր կարգավորված լինեն, պետք ե ընդ-
գրկեն բոլոր յերեխաներն՝ առանց բացա-
ռության, նրանք պետք ե ունենան լավորակ
և հոգածու ղեկավորություն, ինչպես նաև
կանոնավոր բժշկական հսկողություն:

Յերեխաների աչքերի առողջությունը
պահպանել հարկավոր ե հենց նրա ծնված
րոպեյից: Յես արդեն հիշատակեցի նորա-
ծինների աչքերի սուսանակային (տրիպեր)
բորբոքման մասին: Սամի զարհուրելի, վտան-
գակոր հիվանդություն ե, վորի մասին ան-
հրաժեշտ ե այստեղ ավելի մանրամասն խոսել:

Սուսանակը (տրիպերը) շատ տարածված
հիվանդություն ե և մեկից մյուսին ե ան-
ցնում սեռական հարաբեկության ժամանակ:
Կանանց սեռական որդանների սուսանակը
հաճախ քրանիկական ե լինում և ծածուկ ե
ընթանում, իսկ հղության շրջանում սուբ-
կերպարանք ե ստանում: Այդ ժամանակ ավե-
լանում ե նաև արտաթորանքը, վորոնք վա-
րակիչ, հատուկ բակտերիաներ են պարու-
նակում իրենց մեջ:

Յերբ ծնվող մանկիկն անցնում ե մոր
ծննդաբերական որգաններով, նրա դեմքի,
նրա փոքրիկ կոպերի վրա կարող ե նստած
լինել վարակված թարախը ու հենց վոր

մանկիկն առաջին անգամ բաց ե անում
աչիկները, թարախը կարող ե ընկնել կո-
պերի լորձաթաղանթի վրա: Այնուհետև 1—3
որից հետ բուռն թափով սկսվում ե նույն
լորձաթաղանթի բորբոքումը: Ուսչում են
կոպերը, կարմրում և չեն բացվում. աչքե-
րից առատորեն հոսում ե դեղնավուն և
թանձր թարախ: Հիվանդությունը տեղում
ե մոտ 1—2 ամիս և կարող ե մեկ-յերկու
շաբաթում ավերել աչքերի յեղջերաթաղանթը
և ընդմիշտ զրկել յերեխային աչքերից:

Առաջվա ժամանակ կուրանալու գլխա-
փոր պատճառը աչքերի առևսանակն եր: Ներկա-
յումս հազիվ ե պատահում, վոր սուսանա-
կից նորածին մանուկների աչքերը ֆսասվեն:

Ինչից ե դա: Նրանից ե, վոր մի գիտնա-
կան (Կրեղե) գտավ ապահով միջոց, վորը
վարակումից պահպանում ե մանուկների
աչքը: Այդ միջոցը կայանում ե նրանում,
վոր յերեխան ծնվելուն պես, իսկույն, հա-
մենայն դեպս կես կամ մեկ ժամից վոչ ուշ,
նրա աչքն են կաթեցնում լյապիսի (λάπις)
մեկտեղանի լուծույթի կամ բակտերիա
ոպանող մի ուրիշ դեղի մեկ-յերկու կարիլ:

Վորովհետև մենք ըստ արտաքին յերե-
փույթի անկարող ենք իմանալ՝ ընկել են

արդյոք յերեխայի աչքի մեջ վարակիչ բակ-
տերիաներ, թե վոչ, գոյություն ունի հե-
տեղալ կանոնը:—յերեխան ծնվելուց հետո
նրա աչքի մեջ անպատճառ կաթեցնել նա-
խապահպանողական կտթիլներ: Այս կանոնը
մանուկների աչքերը հիվանդանալու վտան-
գից պահպանելու ամենաբարերար միջոցն
ե համուսանում, և մեր Խորհրդային Միու-
թյան մեջ բժիշկներն ու մակաբարձուհիներն
անխախտ գործազրում են այս կանոնը:

Դրա համար անհրաժեշտ ե, վոր յերե-
խայի ծնվելու ժամանակ ներկա լինի պատ-
րաստված, հմուտ բուժպերսոնալը, և վոր
չմոռացվի նորածնի աչքերը նախապահպա-
նողական կաթիլներ կաթեցներ:

Յեթե աչքերն արգեն հիվանդացել են,
այդ դեպքում բժշկական շուտափույթ ոգ-
նությունը և ամենորյա հետազոտումն . ու
հարկավոր դեղերի գործորումը կարող են
շատ անգամ աչքը փրկել: Հարկավոր ե
միայն առանց հետաձգելու բժեկի դիմել յեվ
քուլ չտալ զանազան գրքաց «հարիմների»
բժեկալան յեղանակների կիրառումը:

Զպետք ե մոռանալ, վոր սուսանակի
թույնը վտանգավոր ե վոչ միայն նորածին
մանուկների, այլ և ավելի մեծ յերեխաների

և հասակավոր մարդկանց աչքերի համար։
Հասակավորները սովորաբար գիտեն այդ
վտանգը, վախենում են նրանից և զգուշա-
նում են կեղտոտ, թարախոտ մատներով աչ-
քերին ձեռք տալ։ Սակայն լինում են դեպքեր,
յերբ հասակավորների աչքերն ել հիվանդա-
նում են սուսանակի ծանր բորբոքումով։

Վորպեսզի սուսանակով հիվանդ ընտա-
նիքներում յերեխաների աչքերը չվարակվեն,
անհրաժեշտ ե շատ լավ խնամք տանել յե-
րեխաներին ու ամեն կերպ պահպանել նր-
անց վարակվելուց։ Բայց հիվանդությունը
յերեալու դեպքում, առանց ժամանակ կորց-
նելու, պետք ե դիմել բժշկին։

Յերեխաների առողջությունը և նրանց
տեսողությունը պահպանելու համար միա-
ժամանակ հարկավոր ե պաշտպանել նրանց
այլ համաճարակ հիվանդություններից։
Տեսողության համար շատ վտանգավոր ե
մենինգիտը (մանկական եպիլեպսիա, ընկնա-
վորություն), կարմրուկը յնվ ծաղիկը։ Յե-
րեխայի ծննդյան առաջին իսկ ամիսներում
ծաղկի պարտադիր պատվաստումը, տիֆտե-
րիայի, կարմրուկի, քութեշի և այլ վարա-
կիչ հիվանդությունների իր ժամանակի դըր-
սեվորումը, հիվանդ յերեխաներին առողջ-

ներից անշատումը—ահա այն միջոցառում-
ները, վորոնց պետք ե անպայման անցկաց-
նել՝ յերեխաների ընդհանուր առողջությունը
և նրանց տեսողությունը պահպանելու համար։

X.

ՀԱՍՏԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՇՔԵՐԻ ՃՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԵ

ԿՈՒՐՈՒԹՅՈՒՆՆԵ ՅԵՎ ՊԱՅՔԱԾՔ ՆԲԸ ԳԵՄ

Ծերունական հասակն ունի աչքի յուրահա-
տուկ հիվանդություններ։ Հասակավոր մար-
դիկ, յերբ անցնում են թեթև և անվտանգ
աշխատանքի, ավելի սակավ են յենթարկ-
վում աչքի վնասումների։ Դրա փոխարեն
նրանց աչքերի վրա ավելի ուժեղ ազդեցու-
թյուն են ունենում յերկար տարիների ըն-
թացքում կուտակված ընդհանուր ներքին
հիվանդությունները—սրտի, արյան, յերի-
կամունքների, ուղեղի և այլ որգանների
զործողության անկանոնությունը։ Մարմնի
մաշկը դանառու և չոր, խորշումավոր, ատամ-
ները թափվում են, գլխի մազերն սպիտակում
և ցանցառ են դառնում։

Աչքերի մեջ ել մի շարք փոփոխություն-
ներ են տեղի ունենում։ Աչքի թափանցիկ

նյութերը պղտորվում են, վոսանյակի պըղ-
տորումից բիբը դառնում ե գորշագույն, ա-
ռաջանում ե կատարակից, այսինքն՝ սեվ զուր:
Ներակնային հեղուկը յերկար անշարժ ե
մնում, կիսովում ե և աչքը դառնում ե
կարծիք: Այս շատ վտանգավոր հիվանդու-
թյունը կոչվում ե գլաւուկոմա, վոր ժողո-
վրդին հայտնի յե «կանաչ ջուր» անունով:
Փշանում ե նաև աչքի նյարդաթաղանթը,
ցանցաթաղանթը, տեսողական նյարդը
(«մութ ջուր»): Աչքի այս բոլոր հիվանդա-
գին փոփոխությունները փոքր առ փոքր,
իսկ յերբեմն նաև արագաբար, թուլացնում
են տեսողությունը: Յեթե մանուկ հասա-
կում կուրության պատճառը լինում ե աչ-
քերի սուսանակային բորբոքումը, կարմրու-
կը, զեղձախոր, մինինգետը, յեթե հասակա-
վորներն իրենց բանվորական արբունքի հա-
սակում հաճախ կուրանում են վնասումնե-
րից, տրախոմայից, —ապա ծեր մարդկանց
կուրությանն սպառնում ե գլաւուկոման, կա-
տարակար, յերբեմն ել ուրիշ հիվանդու-
թյուններ:

Բայց այս կուրությունը միանգամայն
բուժելի յե: Ոպերացիայի միջոցով հեռաց-

նելով կատարակար, կույրին կարելի յե վե-
րադարձնել աչքերի լույսը և նույն իսկ հը-
րարավորություն տալ նրան ակնոցով գրել
ու կարդալ: Մակայն, և անբուժելի կուրու-
թյունը, որինակ՝ գլաւուկոմայից առաջացածը,
բազմաթիվ զեպքերում կարելի յեր կանխել,
յեթե ժամանակին ճանաչված լիներ հիվան-
դությունը և ժամանակին ել ձեռք առնված
լինելին բժշկական կանոնավոր միջոցները:
Ցամս այն ե, վոր հաճախ ժամանակին չեն
նկատում հիվանդությունը. հիվանդը, վոր
վոչ մի ցավ չի զգում, այլ միայն աստիճա-
նաբար կորցնում ե տեսողությունը, մեկ
որից մյուսն ե հետաձգում մասնագետ-բժշկի
գիմելը և գալիս ե բժշկից ոգնություն խնդ-
րելու միայն այն ժամանակ, յերբ տեսո-
ղությունն արգեն կատարելապես կորած ե:
Այսպես բազմանում ե կույրերի, ինվա-
լիդների բանակը: Մանկության կամ յերի-
տասարդության հասակում կուրացածների
թվին ավելացնում են նաև նրանք, վորոնք
իրենց տեսողությունը կորցրել են արդեն
հասակավոր տարիքում, այսինքն՝ ծերերը:
Այն կույրերը, վորոնք կորցնում եյին
իրենց ընտանիքը կամ դուրս եյին շըրտվում
տնից, վորպես աշխատանքի անլնդունակներ,

շաբական Ռուսաստանում դառնում եյին
մուրացիկ-աղքատներ, թափառական, շրջում
եյին գյուղից գյուղ, քաղաքից քաղաք և
վաղորմությամբ եյին ապրում:

Խրհրդային Միության մեջ պետու-
թյունը խնամք և տանում աշխատանքի բո-
լոր ինվալիդների մասին, ինչպես նաև կույ-
րերի մասին։ Պետությունը տալիս ենրանց
վորագես ինվալիդների, վոչ միայն սոցիա-
լիստական ապահովություն, այլև ջանում ե
հնարավոր դարձնել նրանց մասնակցու-
թյունն ընդհանուր աշխատանքի, կառուց-
ման ընադավառում։

Կույրերին զրել-կարդալ են սովորեցնում
կորնթարց, այսինքն՝ ուսուցիկ տառերով.
Նրանք անցնում են առաջին և յերկրորդ
աստիճանի դպրոցներում բոլոր գիտություն-
ները, հաջողությամբ սովորում են նաև
բարձրագույն դպրոցներում։ Նրանց մատչե-
մի յեն դառնում բազմաթիվ արհեստներ,
աշխատանքի բազմազան տեսակները՝ հա-
տուկ նրանց համար կարմրացրած մեքենա-
ների և գործիքների ոգնությամբ։ Ուշա-
դրությամբ և հոգատարությամբ շրջապատ-
ված, տեսունակների հետ հավասարապես
աշխատելով, կույրերը ԽՍՀՄ-ում հանդիսա-

նում են աշխատավորների հանրապետու-
թյան լիամասն իրավատեր քաղաքացիներ։
Բայց և այնպես կուրությունը խոշոր
անբախտություն ե, վորի դեմ հարկավոր և
պայքարել բոլոր ուժերով։

Կուրության ցուցանիշը (այսինքն՝ կույ-
րերի թիվը 10 հազար բնակչության միջից)
նաև բնակչության կուլտուրական ցուցա-
նիշն է։ Յարական Ռուսաստանում, ուր աշ-
խատավորներն ապրում եյին անասելի չքա-
վորության և տգիտության մեջ, կուրության
ցուցանիշները հասնում եյին 20-ի ու մի
բան ել ավելի։

Խորհրդային Միության մեջ, խորհրդա-
յին իշխանության և հասարակայնության
ջանքերով այդ ցուցանիշն արդեն իջել է
16-ի և տարեց տարի ել իջնում ե։ Յեզ
մենք կարող ենք միանգամայն վատահ լի-
նել, վոր մեր սոցիալիստական շինարարու-
թյունն, անհընդհատ բարզողելով աշխատա-
վորների բարեկեցությունը և բարձրացնե-
լով նրանց կուլտուրական մակարդակը,
կույրերի թիվը մեր յերկրում կիշեցնի հը-
նարավոր մինիմումին։

Հիվանդ աչքերն իհարկե հարկավոր և
բժշկեր, ոգտվելով բժշկական գիտության

նորագույն բոլոր նվաճումներից, բայց ավելի
կարևոր ե կանխել այդ հիվանդությունները,
թույլ չտալ, վոր նրանք զարդանան:

Ճարական մուսաստանի աշխատավոր
գյուղացիությունն ամենից ավելի տառա-
պում եր աչքերի հիվանդությունից և կույ-
րերի բանակի մշտական լրացնողն եր: Գյու-
ղական բնակչության մեջ հասապուն բույն
եր դրել տրախուման, վոր հսկայական ավե-
րումներ եր գործում, և աշխատավորները
միանգամայն անզոր եյին պայքարելու դա-
րավոր ստրկության, աղքատության և տգի-
տության այս սոսկալի հետեանքի դեմ:

Մեր խորհրդային յերկրում կոլտնտեսու-
թյունները, քաղքաժինների ղեկավարու-
թյամբ, մեծ հաջողությամբ կառուցում են
կուլտուրական ուներ կյանք, վորով արդեն
իսկ վերանում են աչքի հիվանդությունների
արմատները, իսկական պատճառները: Մնում
ե միայն ցանկալ, վոր իրենք աշխատա-
վորներն ել վորքան կարելի յե շուտ սովորեն
մեծագույն ուշադրությամբ վերաբերվել աչ-
քերի աշխատանքին և ամեն կերպ պահպանեն
հիվանդություններից թե իրենց և թե մանա-
փանդ իրենց իերեխաների տեսողությունը:

Հայա
12.19 ՀՀԿ



1916